# ՔՐԻՍՏՈՆՅԱ ՄԱՐԴԿԱՆՑ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՖՈՐՈՒՄԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

(Նոյեմբերի 4-7 2004 թ.)

Նոյեմբերի 4-7-ը Եվրոպական 12 Եկեղեցիների ներկայացուցիչների մասնակցությամբ Բելառուսի Հանրապետության մայրաքաղաք Մինսկում գումարվեց Քրիստոնյա Մարդկանց Եվրոպական Ֆորումի (ՔՄԵՖ) Եվրոպական Կոնֆերանսը, որում Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացնում էր Հոգեշնորհ Տ. Նշան աբղ. Պեպրոսյանը:

Կոնֆերանսում քննարկվեցին մի շարք խնդիրներ, որոնք այժմեական ու հրատապ են Եվրոմիության սահմանների ընդարձակման ներկա ժամանակներում: «Եվրոպան ընդարձակվում է… Տղամարդկանց և կանանց մտահոգություններն ու հույսերը եվրոպական փոփոխությունների գործընթացում», այսպես էր ձևակերպված համաժողովի ընթացքում քննարկվող հիմնախնդիրների շրջանակը, որտեղ տեղ էին գտել հետևյալ թեմաները.

1. Առողջությունը և սոցիալական հիմնախնդիրները,
2. Ամուսինների հարաբերությունները և ընտանեկան կյանքը,
3. Հավատքը և կյանքը,
4. Կրթությունը և հասարակական արժեքները,
5. Մարմնավաճառությունը և կանանց, ինչպես նաև երեխաների ու տղամարդկանց շահագործումը (թրաֆիկինգ):

Այս թեմաներով զեկուցումներից հետո առանձին խմբերով քննարկումներ եղան, և յուրաքանչյուր խումբ ընդհանուր հավաքին ներկայացրեց իր տեսակետը: Որպես ամփոփում ընդունվեց մի փաստաթուղթ-հայտարարագիր, որը Կոնֆերանսի մասնակիցների համատեղ ջանքերի արդյունքն է: Այն արտացոլում է ձևավորված նոր իրողություններն ու նախ և առաջ ընդգծում է դրանց հետ կապված ակնկալիքները:

## ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

### 1. Եվրոպան ընդլայնվում է...

Եվրոպան փոփոխվում է. նախկին թշնամիները դարձել են դաշնակիցներ, և սահմանները Արևելյան և Արևմտյան Եվրոպաների միջև փեղաշարժվում են: Եվրոմիությունը բացում է իր դռները՝ ընդունելով նոր անդամ երկրներ, ուստի և այն վերածվում է քաղաքական համայնքի:

Այսօր Եվրոպան ավելին է, քան ընդհանուր դրամային համակարգ և բաց շուկաներ ունեցող տարածք: Դա այն մարդկանց գիտակցությունն է, ովքեր հիշում են իրենց ընդհանուր արժեքների մասին, որոնք դուրս են գալիս Եվրոմիության քաղաքական կառույցի սահմաններից: Քրիստոնեության, լեզուների, գիտության, գրականության, երաժշտության, արվեստի և քաղաքական փիլիսոփայության ընդհանուր պատմությունը բնորոշում է նոր տարածաշրջանի ոգին: Լյութերի, Դեկարտի, Լոմոնոսովի, Կանտի, Հոբսի, Մոնտեսքյոյի, Լոքի, Դոստոևսկու կամ Հերդերի նման մարդիկ մեծ ձեռքբերումներ են ունեցել մարդ անհատի անձնական պատասխանատվության, ազատության և արժանապատվության զարգացման հարցում իրենց ազգերի սահմաններից նույնիսկ շատ ավելի հեռավոր վայրերում:

Այս ընդհանուր արժեքները պետք է ամրապնդվեն և կրկին ներառվեն փոփոխվող Եվրոպայի գործընթացի մեջ:

### 2. Կանանց և տղամարդկանց մտահոգություններն ու հույսերը Եվրոպայի միավորման գործընթացում

Եվրոպայի քաղաքական դիմագիծն արագ փոփոխվում է, բայց մարդիկ նաև նոր մարտահրավերներով պետք է դիմագրավեն կյանքի փոփոխվող սոցիալական և տնտեսական պայմաններին:

Սոցիալական հավասարակշռությունը վտանգի մեջ է, կանայք և տղամարդիկ ստիպված են նոր, տարօրինակ դերեր ստանձնել: Հավատքի, Եկեղեցիների և ոգեկանության տարբեր դրսևորումները համագոյակցում են կողք-կողքի: Հաղորդակցության ասպարեզում հեղափոխություն է, և բաց սահմաններն ապահովում են և՛ ազատություն փոխադրության համար, և՛ վտանգ, ինչ վերաբերում է, օրինակ, միջազգային հանցագործություններին:

Այս համատեքստում ՔՄԵՖ ցանկանում է, որ

- Մարդիկ պատասխանատվություն ստանձնեն ընտանիքում, համագործակցության և քրիստոնեական դաստիարակության ոլորտում,
- Մարդկանց խրախուսեն ապրելու իրենց ունեցած հավատքն ի Քրիստոս և ներառեն քրիստոնեական արժեքները՝ որպես ուղղվածություն դեպի տնտեսական գործընթացը,
- Նրբազգացություն ցուցաբերվի շահագործման (թրաֆիկինգի) զոհ դարձած կանանց և տղամարդկանց հանդեպ:

Երբ սկսեն մարդկանց զգացմունքներին լրջորեն վերաբերվել, միայն այդ դեպքում Եվրոպայի զարգացման գործընթացը կկարողանա ըմբռնողություն գտնել մարդկանց սրտերում:

### 3. Եկեք միասին կառուցենք ապագան

Եվրոպայի պատմությունը և ներկան ցույց են տալիս, որ ազգամիջյան ատելությունը, պատերազմն ու բնապահպանական վտանգները սպառնում են խարխլել մեր կյանքի հիմքերը նույնիսկ այսօր: ՔՄԵՖ պետք է ընկալել որպես հույսի արձագանք՝ ուղղված դրա դեմ: Այսօր մարդիկ քննական հայացքով են նայում իրենց male-occidental արևմտյան ինքնագիտակցության և աշխարհայացքի հետևանքներին: Որպես մարդ մենք սոցիալական և բնապահպանական պատասխանատվություն ենք ստանձնում՝ կառուցելու մեր ընդհանուր աշխարհը: Եկեք հավատանք Աստծո պատգամին, որ է՝ արդարությունը կյանքի ճանապարհն է:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
*Միջեկեղեցական հարաբերությունների բաժին*